ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ն.Բ.ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ, Հայկական հարցը մինչխորհրդային հայ հասարակական-քաղաքական մտքի և պատմագրության մեջ, Ե., «Ոսկան Երևանցի» հրատ., 1997, 271 էջ:

Պատմագրության մեջ Հայկական հարցի պատմության ուսումնասիրությունն այսօր ունի ոչ միայն գիտական-ճանաչողական, այլև արդիական գաղափարա-քաղաքական նշանակություն: Այս առումով դժվար է գերագնահատել Նորայր Սարուխանյանի «Հայկական հարցը մինչխորհրդային հայ հասարակական-քաղաքական մտքի և պատմագրության մեջ» մենագրության այժմեական նշանակությունը: Ուսումնասիրությունը մինչխորհրդային հայ հասարակական-քաղաքական մտքի և պատմագրության մեջ Հայկական հարցի արծարծման վերելքների և վայրէջքների ուսումնասիրության քննություն է, բնույթով՝ բանավիճային, ուստի ընթերցողի հարցասիրությունը բավարարելու նպատակով հեղինակն անհրաժեշտ է համարել ընդհանուր գծերով տալ XIX դարի երկրորդ կեսի օսմանյան պետության՝ այդ «հիվանդ մարդու» բնութագիրը, սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական այն միջավայրը, որում դատապարտված էր ապրելու նաև արևմտահայությունը: Ուսումնասիրության առաջին էջերում ցույց է տրվում այն ծանր կացությունը, որում տառապում էր հայ ժողովրդի արևմտյան հատվածը հայրենիքի գերակշիռ տարածքում, ուր թուրքական բռնատիրության ճիրաններում ապրող բնիկների գոյատևման համար անգամ տարրական պայմաններ չկային: Խաթարված էր արևմտահայության ոչ միայն տնտեսական, այլև հոգևոր կյանքը: XIX դարի երկրորդ կեսին շարունակվում էր արևմտահայության գլխին ծանրացած դարավոր աղետը՝ արտագաղթը դեպի օտար երկրներ: Եթե թուրքական կայսրության մի շարք ժողովուրդներ արդեն ազատագրվել և կենսակերպի եվրոպական ուղիներ էին որոնում, ապա արևմտահայությունը ջանքեր էր գործադրում իր գոյության իրավունքը հաստատել՝ թոթափելով օսմանյան բարբարոսության կապանքները: Իսկ ո՞րն էր այն ուժը, որ կարողանար օգնության ձեռք մեկնել հայ ժողովրդին: Մինչև ռուսական կողմնորոշման երևան գալը հայ վերնախավերում իշխող էր այն մտայնությունը, թե հայերն իրենց ստրկական կացությունից դուրս կգան Արևմտյան Եվրոպայի միջոցով: Ամբողջ միջնադարյան Հայաստանի ազատագրական գաղափարախոսության պատմությունը մինչև XVIII դարի սկիզբը կրում էր պատրանքաշատ այդ մտայնության կնիքը: Որ հայերի ռուսական կողմնորոշումը գործնական և բանուկ ուղիների վրա դրվեց հենց XVIII դարի նախաշեմին, որոշակի արտահայտություն է գտել մինչխորհրդային հայ պատմագրության էջերում: «Հայերը Ռուսաստանի հետ հաղորդակցություններ ունեին դեռ ԺԸ դարից առաջ, - 1877թ., գրում էր Ալ.Երիցյանը, - բայց այդ հարաբերությունները միայն առևտրական էին: Ամենից առաջ Պետրոս Մեծը ուշադրություն դարձրեց հայերի վրա. նա հասկացավ, որ հայոց ազգի ձեռքով կարելի է ռուսաց իշխանությունը Անդրկովկասում հաստատել» (էջ 15 - 16): Իսկ հայ ազատագրական շարժման գործիչներն այն համոզմունքն ունեին արդեն, որ միայն Ռուսաստանն էր այն իրական ուժը, որի օգնությամբ տնտեսապես և քաղաքականապես բզկտված հայ ժողովուրդը կարող էր թոթափել Արևելքի օտար տերությունների լուծը: Այդ մտայնությունն էր գերիշխողը XVIII - XIXդդ. բոլոր զինաբախումների ժամանակ՝ Ռուսաստանի մասնակցությամբ, այդ թվում նաև

1877 - 1878թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում: Գրքի առաջին՝ «Հայկական հարցը և 19-րդ դարի 70 - 80-ական թվականների հայ հասարակական-քաղաքական միտքը» գլխում Ն.Սարուխանյանը քննարկում և լուսաբանում է հայ ազգային-ազատագրական շարժման գործիչների այն տեսակետները, որոնք ի հայտ եկան պատերազմի նախօրյակին, պատերազմի ընթացքում և պատերազմից հետո: Գրքում ցույց է տրվում ռուսական զենքի օգնությամբ թուրքական տիրապետությունից ազատագրվելու՝ ազգային-քաղաքական հեռանկարների մասին հայ գործիչների խանդավառությունը՝ մի կողմից, Բեռլինի կոնգրեսից հետո Թուրքիայի ստատուս քվոն պահպանելու և Հայկական հարցը սեփական շահերին ծառայեցնելու ուղին որդեգրած եվրոպական իմպերիալիստական տերություններից նրանց հիասթափությունը՝ մյուս կողմից: Մի պահ թվում էր, թե Սան-Ստեֆանոյի պայմանագրով, որ հայ ժողովուրդը դիմավորեց մեծ խանդավառությամբ, թուրքական բռնատիրության ճիրաններում խոշտանգվող Արևմտյան Հայաստանին փոխարինելու էր գալիս ազատագրված Հայաստանը: Ժամանակի հայ գործիչները տակավին չէին նշմարում թուրք կառավարողների ապագա ծրագրերը և Օսմանյան կայսրությունում տնտեսական-քաղաքական ընթացիկ և հեռուն միտված շահեր հետապնդող եվրոպական տերությունների և իրենց ակնկալությունների միջև եղած անդունդը: Սան-Ստեֆանոյի պայմանագրով ռուսական զորքերի առկայության պայմաններում, Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ կատարելու երաշխիքը Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածով փոխարինվում էր անորոշ, տարտամ մի բանաձևով, ուր արձանագրվում էր, որ արևմտահայերի իրավունքները պաշտպանելու համար Բարձր Դուռը պարտավորվում է ապահովել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից, բայց առանց ռուսական զորքերի առկայության պայմանի: Նմանօրինակ տարբերական պարտավորությունը, որ իր նմանը չուներ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության պատմության մեջ, միայն ծայրաստիճան բարոյալքված պետության նկատմամբ կարող էր միջազգային արձանագրության նյութ ծառայել: Բայց հանուն շահի, «քաղաքակիրթ» Եվրոպան պաշտպանում էր բարոյալքված Օսմանյան կայսրությանը:

Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածը, Կ.Պոլսում և Անդրկովկասի հայաշատ քաղաքներում (Թբիլիսիում և այլուր) իրարամերժ գնահատականներ ստանալով հանդերձ, հայ հասարակական-քաղաքական մտքի բոլոր հոսանքների համար մի տեսակ խթան հանդիսացավ վերագնահատելու սեփական ուժերը, նպատակներն ու հետագա գործելակերպը: «Թուրքիան թուրքերի համար» «նոր օսմանների» կարգախոսը, Բեռլինի կոնգրեսից հետո սուլթան Աբդուլ Համիդի ծայրահեղ հալածանքների նոր մեկնարկն ու ընթացքը հայկական քաղաքական շրջաններին հետզհետե մղում էին համախմբման գաղափարի մշակմանն ու գործադրման ուղիների որոնմանը: Հիասթափված մեծ տերությունների դիվանագիտական խաբկանքներից և սուլթանական կառավարության հայահալած քաղաքականության սաստկացումից՝ Մկրտիչ Խրիմյանն անցնում է Հայկական հարցը զենքի ուժով լուծելու, զինված պայքարի քարոզչությանը: Մինչդեռ հարցի նման լուծման նկատմամբ բացասական դիրքորոշում ունեին պոլսահայ վերնախավի այն ներկայացուցիչները, որոնք մեծ տերությունների միջամտությամբ, Օսմանյան կայսրության սահմաններում ազգային ինքնավարության ստեղծմանն էին հետամուտ: Բեռլինի կոնգրեսի ընթացքում և նրան հաջորդող առաջին տարիներին Բալկանյան ժողովուրդների օրինակը ոգևորում և եռանդ էր ներարկում պոլսահայ

սահմանադրականներ Գր.Օտյանին, Ն.Ռուսինյանին, Սերվիչենին, Գր.Աղաթոնին և մյուսներին: Նրանցից ոմանք ոչ իրատեսական էին պատկերացնում եվրոպական դիվանագիտության աջակցությամբ ձեռք բերելու Արևմտահայաստանի ինքնավարությունը: Մինչդեռ, հայ ազգային-ազատագրական շարժման շատ գործիչների տեսանելի էին, որ ո՛չ Ազգային սահմանադրությունը, ո՛չ Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածն ի վիճակի չէին ապահովելու արևմտահայերի պատիվը, անձն ու գույքը, որ դրանք իրենց էությամբ կոչված էին «ազատության» երաշխիքներ տալու սուլթանական իշխանությունների կողմից սանձազերծվող հակահայկական գործողություններին: Ուսումնասիրության մեջ ընդգծվում է, որ Բեռլինի կոնգրեսից հետո արևմտահայ առաջադեմ մտավորականները, գավառահայ բուրժուազիան, բնակչության մյուս խավերը, որոնք ամենատարբեր ձևերով տուժում էին թուրքական աճող բռնություններից, կողմնորոշվում էին դեպի պայքար և դեպի Ռուսաստան (էջ 50 – 51): Գրքի հեղինակը մասնավորապես կարևորում է 1870 – 1880-ական թվականների հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսներ և գործիչներ Մ.Խրիմյանի, Գ.Սրվանձտյանցի, Գր.Արծրունու, Բաֆֆու, Ռ.Պատկանյանի, Մ.Մամուրյանի, Ս.Շահազիզի, Ծերենցի և մյուսների քաղաքական ուղեգիծը, գործիչներ, որոնց ստեղծարար գաղափարներն ակնբախ են դարձնում, որ նրանք քննական ու քննադատական սթափ հայացքով էին դիտարկում Ռուսաստանի օգնությամբ սուլթանական լուծը թոթափելու դրական և արևմտահայության վրա ռուսական ազդեցությունը խարխլելու կամ իսպառ դուրս վանելու արևմտյան տերությունների քաղաքականության բացասական հետևանքները: Ազգային-ազատագրական շարժման հետագա գործելակերպի որոշումը, Հայկական հարցի լուծման համար պայքարը 1890-ական թվականներին դառնում էր հայ ազգային կուսակցությունների առաջնային խնդիրը: Հայկական հարցը մտնում էր իր ողբերգական պատմության նոր շրջափուլը: Ն.Սարուխանյանի մենագրության երկրորդ «Հայկական հարցում կուսակցությունների դիրքորոշման և գործելակերպի գնահատականների շուրջ» գլխում քննական վերլուծության են ենթարկված Հայկական հարցի լուծման ուղիների մասին կուսակցությունների ծրագրային դրույթները և նշանավոր գործիչների մոտեցումները: Բացահայտված է կուսակցությունների գաղափարաբանության և գործելակերպի մեջ կողմնորոշումների և սեփական ուժերին ապավինելու համակիրների ու հակառակորդների գաղափարական և գործնական հակամարտությունը, ազգային-քաղաքական անանց շահերի պաշտպանության մերօրյա դիտակետից փորձ է արվում կատարել դրանց ընդունելի կամ մերժելի գնահատականների վերլուծությունը: Պատմական փաստերի և ժամանակի գործիչների տեսակետների համադրմամբ և հակադրմամբ, գրքի հեղինակը սխալ է համարել սուլթանական բռնատիրության դեմ երկարատև պայքարի ծառայությամբ հպարտ Հայ հեղափոխական դաշնակցության և օսմանյան հասարակության մեջ շովինիստական տրամադրությունների արտահայտիչ երիտթուրքական կուսակցության դաշինքը (էջ 106 – 107):

Գրքի երրորդ «Հայկական հարցը մինչխորհրդային հայ պատմագրության մեջ» գլխում Ն.Սարուխանյանը պատմաքննական վերլուծության է ենթարկում հիմնախնդրի լուսաբանման ուղղությամբ պատմագիտական մտքի ճիշտ և դեպի գալիքը միտված կողմնորոշումները, ինչպես նաև պահպանողական ու լիբերալ ուղղությունների՝ ծայրահեղ դիրքերից մերձենալու միտումները: Բացահայտված են պատմագրության տարբեր ուղղությունների քաղաքական ուղեգծերի՝ անցյալի և մերօրյա դիտակետից ընդունելին և մերժելին:

Ն.Սարուխանյանի գրքի վերջաբանը հակիրճ մի ակնարկ է, ուր ուրվագծված են խորհրդային ժամանակաշրջանի հայ պատմագրության մեջ Հայկական հարցի ուսումնասիրման հիմնական շրջափուլերը, գլխավոր եզրակացությունները, դրական միտումները, որոնցում, ցավոք, պատմության կողմից դատապարտված արևմտյան կողմնորոշման դիվանագիտական կարճատեսությանը տուրք տալու անսքող շեշտադրումներ կան նաև:

Ամփոփենք: Ն.Սարուխանյանի «Հայկական հարցը մինչխորհրդային հայ հասարակական-քաղաքական մտքի և պատմագրության մեջ» ուսումնասիրությունը կուսակցական գաղափարականացումից վեր կանգնած, ժողովրդի համազգային և պետական խնդիրներից բխած և այդ խնդիրներին ընդառաջող քաղաքական հայագիտության՝ դրվատանքի արժանի մենագրություն է:

Ս.Ս.ՍՏԵՓԱՆՅԱՆ
Պատմագիտության դոկտոր